ք. Երևան, Ս. Դավթի 87ա «14» փետրվար 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 237-Ա
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ ԱՐՏԱՎԱԶԴ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 5416/2023/Ե/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ ԱՐՏԱՎԱԶԴ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ (Հասցե՝ Կոտայքի մարզ, Լեռնանիստ 4թղմ., 10տ. ՀՎՀՀ 40555754 ՀԾՀ 2010560124) չկատարված հարկային պարտավորությունը 05.10.2023թ-ի դրությամբ կազմում է 508250 դրամ, այդ թվում հարկ՝ 260820 դրամ, տույժ՝ 73550 դրամ, տուգանք՝173800 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 15.01.2024թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն ֆիզիկական անձի կողմից 04.11.2017թ. ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք է ներմուծվել շրջակա միջավայրին վնաս պատճառող և 5 տարուց ավելի թողարկման տարեթիվ ունեցող 2006թ. արտադրության տրանսպորտային միջոց:

Ներմուծված տրանսպորտային միջոցի մասով, իրավահարաբերության ծագման պահին գործած <Ավելացված արժեքի հարկի> մասին օրենքի 3.1 հոդվածի 3-րդ կետի համաձայն, ֆիզիկական անձը հանդիսացել է ԱԱՀ պարտավորություն կրող և <Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարման և վճարման առանձնահատկությունների մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան <Անուղղակի հարկերի մասին> արձանագրության 20-րդ կետի կիրառության իմաստով ապրանքների ներմուծման դեպքում հարկ վճարողը պարտավոր է նույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետներում իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել ներմուծողի լրացրած՝ ներմուծման հարկային հայտարարագիրը:

<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին> ՀՀ օրենքի (մինչև 01.01.2018թ. գործող խմբագրությամբ) 10-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ԵՏՄ անդամ պետությունից ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող և 5 տարուց ավելի թողարկման տարեթիվ ունեցող ապրանքների համար վճարը հաշվարկվում է ներմուծողը՝ այդ ապրանքների համար <Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով ավելացված արժեքի հարկով բազայի (առանց այդ ապրանքների համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարի)հիման վրա(վճարի հաշվարկման բազա) և պետական բյուջե է վճարում մինչև այդ ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) օրն ընդգրկվող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:Նույն պարբերությունում նշված բնապահպանաակն վճարի հաշվարկը ներառվում է <Անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին > ՀՀ օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում հարկային մարմին ներկայացվող ներմուծման հարկային հայտարարագրում:

Ֆիզիկական անձ ԱՐՏԱՎԱԶԴ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ կողմից 2017թ. ընթացքում իրականացված վերոնշյալ ներմուծման գործարքի մասով ներմուծման հայտարարագիր չի ներկայացվել և չի վճարել ԱԱՀ-ի և բնապահպանական վճարի գծով պարտավորությունը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը 05.10.2023թ-ի դրությամբ կազմում է 508250 դրամ, որից ԱԱՀ գծով՝ 173880 դրամ, որը հաշվարկվել է <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն, բնապահպանական վճարի գծով՝ 86940դրամ,որը հաշվարկվել է <Բնապահպանական վճարների դրոյքաչափերի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան, տույժ՝ 73550 դրամ, որը հաշվարկվել է ՀՀ հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի

համաձայն, տուգանք՝ 173880 դրամ, որը հաշվարկվել է իրավավահարաբերությունների ծագման պահին գործած <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.ֆիզիկական անձ ԱՐՏԱՎԱԶԴ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՑ գանձել **508250** դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

05.10.2023թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	ԱԱՀ	20.12.2017թ	173880	73550	173880	508250	պետական բյուջե	900008000490
2	Բնապահպանական վճար	20.12.2017թ	86940				պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:

3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **ԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

<u>Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:</u>

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների
կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և
պարտավորությունների կատարման ապահովման բաժնի
առաջատար մասնագետ Արեգա Պարսեղյան, հեռ. 010-30-91-91 /91-36/: